Վերանորոգվել են թվով 5 մեքենաների և էքսկավատորների բարձր ճնշման խողովակները: Կցորդման համակարգի նորոգումներ են իրականացվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:



Կատարվել է թվով 4 մեքենաների թափքի նորոգում, ապակիների, ծածկոցի տեղադրում:

Առջևի համակարգի նորոգում է կատարվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են գնդավորներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ:

Հետևի համակարգի նորոգումներ են կատարվել թվով 3 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 4 մեքենաների վրա,



փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Վերանորոգվել են թվով 2 մեքենաների և էքսկավատորների բարձր ճնշման խողովակներ և մղիչներ:

Փոխարինվել են թվով 59 մեքենա-մեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, անտիֆրիզ և գտիչներ:

Գեներատորի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են ածուխներ, դիոդային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Թվով 2 մեքենաների վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Իրականացվել է քանդող բազուկի նորոգում, կատարվել են զոդման աշխատանքներ:





# ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## 2.1. Բաժանորդների տվյալներ

01.03.2018թ. դրությամբ «Վեռլիա Ջուր» ՓԲԸ «Բնտերակտիվ» համակարգ է մուտքագրվել Երևանի տարածաշրջանից 151.386, իսկ Մարզերում 132.500 նոր պայմանագիր:

Շարունակվում է պայմանագրերի կնքման գործընթացը, չնայած որ խոչընդոտող հանգամանքները մնում են անփոփոխ. բաժանորդների բնակարանների մշտապես կամ ժամանակավոր փակ լինելը, սեփականատիրոջ բացակայությունը հանրապետությունից, սեփականության (վարձակալության) իրավունքի փաստաթղթերի թերի լինելը, կամ անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի, վավերականության ժամկետի լրացած լինելը, վարձակալությամբ հանձնված բնակարաններում անհրաժեշտ փաստաթղթերի կամ սեփականատիրոջ բացակայությունը և այլն:

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները փետրվար ամսվա դրությամբ բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գործող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	394.956	288.474	73.0
2		Իրավաբանական անձ	19.690	13.390	68.0
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	324.270	170.086	52.5
2		Իրավաբանական անձ	13.441	7.071	52.6
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	719.226	458.560	63.8
		Իրավաբանական անձ	33.131	20.461	61.8

## 2.2. Հատույթ


Շարունակվում են ջրամատակարարման սպառման ծավալների բարելավմանն ուղղված աշխատանքները:

Հատկապես խոշոր սպառողների մասով իրականացված միջոցառումների արդյունքում բավականին ավելացել են սպառման ծավալները


- Անսարք, ժամկետանց և ցածր դասի ջրաչափերի փոխարինում
- Ջրաչափերի տեղափոխում բաժանորդների տարածքներից դուրս,
- Ապօրինի և շրջանցող միացումների հայտնաբերում և ապամոնտաժում:

Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված է 2018թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հատույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)



Նախորդ տարվա փետրվար ամսվա համեմատ սպառման ծավալների նվազումը պայմանավորված են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով՝

- Մի շարք խոշոր սպառողների սպառման ծավալների կտրուկ նվազում
- Նախորդ տարվա համեմատ եղանակային մեղմ պայմաններ

Ստորև, աղյուսակի տեսքով, բերված է 2018թ. փետրվար ամսին Ընկերության Առևտրային Տնօրինությունների հասույթի առաջադրանքի կատարողականության ցուցանիշները.

Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք հազ.մ <sup>3</sup>	Փաստացի հազ.մ <sup>3</sup>	Տարբերություն %, հազ.մ <sup>3</sup>
Երևան	Փետրվար	6.472	5.986	-7.51
Մարզեր		3.503	2.758	-21.26
Ընդամենը		9.975	8.744	-12.34

Չհաշվառված հասույթի հայտնաբերման, ցուցանիշների բարելավման նպատակով պարբերաբար իրականացվում են «գրոյական» ջրածխիսերի վերլուծություններ, որոնց արդյունքներով վերահսկողական խմբերի կողմից տեղերում կատարվում են լրացուցիչ ստուգումներ: Ստուգումների ընթացքում հայտնաբերված՝ ջրաչափերով չհաշվառված, բաժանորդների տվյալների բազա չմուտքագրված ծախսերն անմիջապես մուտքագրվում են բաժանորդների հաշվառման քարտերին:

Առևտրային տնօրինությունների վերահսկողական խմբերի կողմից հայտնաբերված կասկածելի և խափանված ջրաչափերի ցուցակները ներկայացվում են Տեխնիկական տնօրինությանը՝ դրանք նորերով փոխարինելու նպատակով:

Փոխարինված ջրաչափերը ներկայացվում են ջրաչափերի ստուգաչափման լաբորատորիա զննման և նախնական փորձաքննության: Փետրվար ամսին համաձայն ջրաչափի զննման և նախնական փորձաքննության արձանագրությունների թվով 698 ջրաչափերի համար կազմվել են անսարքության և արտաքին միջամտության վերաբերյալ արձանագրություններ: Բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել մոտ 175.562 մ3 վերահաշվակված հասույթ:

Կատարվող աշխատանքների արդյունքում ավելացել են ինչպես առևտրային ջրաչափական սարք ունեցող բաժանորդների քանակը, այնպես էլ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալները: Ստորև բերված աղյուսակում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Տարեթիվ	Երևան	Մարզեր
	Փետրվար	
2017թ.	13.5	9.5
2018թ.	13.6	12.1
Տարբերությունը	0.1	1.9



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



### 2.3. Գանձույթ

2018թ. հունվարի 1-ից փոխվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները: Ներկա և նախկին սակագների տարբերությունը սուբսիդավորվում է ՀՀ կառավարության 21.12.2017թ. թիվ 1697-Ն որոշման համաձայն:

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով Ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով, հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ, մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են աղյուսակում.

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Ընդամենը
Երևան	Առաջադրանք	1.145.130	1.136.846	2.281.976
	Հավաքագրում	809.156	950.219	1.759.375
	%	70.66	83.58	77.10
Մարզեր	Առաջադրանք	485.310	471.395	956.705
	Հավաքագրում	404.088	443.632	847.720
	%	83.26	94.11	88.61
Ընդամենը	Առաջադրանք	1.630.440	1.608.241	3.238.681
	Հավաքագրում	1.213.244	1.393.850	2.607.094
	%	74.41	86.67	80.50

ՀՀ Կառավարության կողմից 2018թ. հունվար ամսվա հասույթի նկատմամբ սուբսիդավորված 47.301, 48 դրամ գումարը 2018թ. փետրվարին չի վճարվել:  
Պետք է նշել, որ օբյեկտիվ պատճառներով վճարումներ չեն կատարել հանրապետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունները (մասնավորապես Պաշտպանության նախարարության ստորաբաժանումները՝ մոտ 40.0 մլն. դրամ):

## 2.4 Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Տարածաշրջանների Առևտրային Տնօրինությունների աշխատակիցների կողմից կնքվում են պարտքերի մարման ժամանակացույցեր, որոնք Ընկերության համար հանդիսանում են վճարման ընդունելի երաշխիքներ: Հաշվետու ժամանակահատվածում կնքվել է թվով 325 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 23մլն. դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու նպատակով այդ բաժանորդների հետ առաջնահերթ կնքվում են նոր պայմանագրեր, ճշգրտվում են դեբիտորական պարտքերը և պարտատերերի ցուցակները ներկայացվում են Իրավաբանական վարչություն:

2018թ. փետրվար ամսին 421 բաժանորդի պարտքերի մասով դատական հայցեր են ներկայացվել մոտ 27 մլն. դրամ պահանջով:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում դադարեցվում է իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.03.2018թ. դրությամբ (մլն.դրամ)	Այդ թվում փետրվար ամսվա հասույթ (մլն.դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	2.129.813	1.097.533
Բնակիչ-բաժանորդներ	1.448.306	712.138
Իրավաբանական անձեր	681.507	385.396
Սարգերի տարածաշրջան, այդ թվում	1.663.271	443.598
Բնակիչ-բաժանորդներ	1.379.745	316.821
Իրավաբանական անձեր	283.526	126.777
Ընդամենը, այդ թվում	3.793.084	1.541.131
Բնակիչ-բաժանորդներ	2.828.051	1.028.959
Իրավաբանական անձեր	965.033	512.172


Հարկ է նշել, որ Սարգերի տարածաշրջանի առկա պարտքերից առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները և բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները, ինչը բավական դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի հստակեցման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Երևանի Տարածաշրջանի Առևտրային տնօրինության սպասարկման տարածքում շուրջ 88.52մլն. դրամը կուտակվել է երկու բաժանորդներին «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ին և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքին մեծածախ սակագնով մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց՝ պարբերաբար չվճարելու պատճառով:

2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Երևան)



2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.03.2018թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	383.923	286.382	74.59	18.748	13.382	71.38
	Առանց ջրաչափի	11.033	2.092	18.96	942	8	0.85
Մարզեր	Ջրաչափով	282.092	164.036	58.15	12.036	7.063	58.68
	Առանց ջրաչափի	42.178	6.050	14.34	1.405	8	0.57
Ընդամենը	Ջրաչափով	666.015	450.418	67.63	30.784	20.445	66.41
	Առանց ջրաչափի	53.211	8.142	15.30	2.347	16	0.68

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ տվյալների բազայում 01.03.2018թ. դրությամբ հաշվառված պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	510.637	279.630	54.76	21.735	3.600	16.56
Մարզեր	328.953	79.038	24.03	13.880	1.605	11.56
Ընդամենը	839.590	358.668	42.72	36.615	5.205	14.61

Խափանված ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներ՝ դրանց հետագա փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում նոր տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4.950, իսկ Մարզերում 964 հատ ջրաչափական սարք:

Այդ թվում ԵՏՍՏ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 85, իսկ ՄՏՍՏ սպասարկման տարածքում՝ 232 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկը կատարվում է ջրաչափի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճզգրիտ հաշվառմանը:



Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր			
Փողոց, շենք	Ջրաչափերի ընդհանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Ջ.Անդրանիկի թաղ. 10	51	32	62.7
Ջ.Անդրանիկի թաղ. 6	53	36	67.9
Ջ.Անդրանիկի թաղ. 8	55	49	89.1
Շերամի 1	58	32	55.2
Շերամի 101	83	71	85.5
Շերամի 103	109	86	78.9
Շերամի 105	204	158	77.5
Շերամի 107	165	145	87.9
Շերամի 109	112	85	75.9
Շերամի 11	61	50	82.0
Շերամի 111	104	80	76.9
Շերամի 113	183	158	86.3
Շերամի 115	199	131	65.8
Շերամի 13	93	63	67.7
Շերամի 15	97	70	72.2
Շերամի 17	144	111	77.1
Շերամի 19	58	34	58.6
Շերամի 21	59	45	76.3
Շերամի 23	100	89	89.0
Շերամի 25	105	91	86.7
Շերամի 27	146	127	87.0
Շերամի 29	81	64	79.0
Շերամի 3	98	77	78.6
Շերամի 31	59	44	74.6
Շերամի 33	56	47	83.9
Շերամի 35	79	71	89.9
Շերամի 37	57	41	71.9
Շերամի 39	141	107	75.9
Շերամի 41	59	46	78.0
Շերամի 43	58	41	70.7
Շերամի 47	96	68	70.8
Շերամի 49	100	85	85.0
Շերամի 5	101	63	62.4
Շերամի 51	145	114	78.6
Շերամի 53	144	118	81.9
Շերամի 55	149	109	73.2
Շերամի 57	103	67	65.0
Շերամի 59	175	140	80.0
Շերամի 61	89	73	82.0
Շերամի 63	73	60	82.2
Շերամի 65	76	52	68.4
Շերամի 67	111	93	83.8
Շերամի 69	146	116	79.5
Շերամի 7	73	57	78.1

Փողոց, շենք	Ջրաչափերի ընդհանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Շերամի 71	152	121	79.6
Շերամի 77	103	82	79.6
Շերամի 79	176	146	83.0
Շերամի 81	88	69	78.4
Շերամի 83	70	54	77.1
Շերամի 85	72	62	86.1
Շերամի 87	199	169	84.9
Շերամի 89	145	132	91.0
Շերամի 9	74	53	71.6
Շերամի 93	102	82	80.4
Շերամի 95	72	66	91.7
Շերամի 97	72	54	75.0
Շերամի 99	178	146	82.0
Սվաճյանի 34	71	61	85.9
Սվաճյանի 36	69	55	79.7
Սվաճյանի 38	209	159	76.1
Սվաճյանի 40	108	66	61.1
Սվաճյանի 44	121	85	70.2
Սվաճյանի 46	74	57	77.0
Սվաճյանի 48	70	62	88.6
Սվաճյանի 50	162	130	80.2
Սվաճյանի 52	106	78	73.6
Սվաճյանի 56	107	74	69.2
Սվաճյանի 58	76	65	85.5
Սվաճյանի 60	70	57	81.4
Սվաճյանի 60/1	85	65	76.5
Սվաճյանի 62	121	106	87.6
Օհանովի 1	91	56	61.5
Օհանովի 10	108	80	74.1
Օհանովի 11	52	38	73.1
Օհանովի 12	89	83	93.3
Օհանովի 14	71	61	85.9
Օհանովի 16	73	50	68.5
Օհանովի 18	71	48	67.6
Օհանովի 2	173	119	68.8
Օհանովի 20	96	64	66.7
Օհանովի 24	134	84	62.7
Օհանովի 3	79	62	78.5
Օհանովի 4	147	120	81.6
Օհանովի 5	101	80	79.2
Օհանովի 6	126	102	81.0
Օհանովի 7	80	62	77.5
Օհանովի 8	111	85	76.6
Օհանովի 9	80	46	57.5
ԸՆԴԱՄԱՏՆԸ	9142	7092	77.6

Շարունակվում են Նոր Նորքի 7-րդ զանգվածում և Ջրվեժի Մայակ-Բանավանում թաղամասային ծրագրով ջրաչափերի փոխարինման աշխատանքները:


Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
7 Զանգված 1	126	45	35.7
7 Զանգված 4	186	140	75.3
7 Զանգված 5	72	50	69.4
7 Զանգված 6	72	53	73.6
7 Զանգված 7	71	56	78.9
7 Զանգված 8	74	40	54.1
7 Զանգված 9	71	58	81.7
7 Զանգված 10	68	46	67.6
7 Զանգված 11	69	52	75.4
7 Զանգված 12	73	48	65.8
7 Զանգված 13	74	63	85.1
7 Զանգված 14	72	56	77.8
7 Զանգված 15	75	58	77.3
7 Զանգված 16	72	54	75.0
7 Զանգված 17	66	41	62.1
7 Զանգված 18	70	47	67.1
7 Զանգված 19	67	46	68.7
7 Զանգված 20	64	49	76.6
7 Զանգված 21	69	66	95.7
7 Զանգված 22	70	56	80.0
7 Զանգված 23	68	49	72.1
7 Զանգված 24	71	29	40.8
7 Զանգված 25	72	34	47.2
7 Զանգված 26	71	32	45.1
7 Զանգված 27	73	37	50.7
7 Զանգված 33	2	2	100.0
7 Զանգված 34	89	64	71.9
7 Զանգված 35	73	25	34.2
7 Զանգված 36	88	62	70.5
7 Զանգված 37	83	51	61.4
7 Զանգված 38	83	45	54.2
7 Զանգված 39	85	50	58.8
7 Զանգված 41	82	48	58.5
7 Զանգված 42	91	49	53.8
7 Զանգված 43	67	28	41.8
7 Զանգված 44	84	40	47.6
7 Զանգված 45	85	37	43.5
7 Զանգված 46	85	51	60.0
7 Զանգված 47	84	43	51.2
7 Զանգված 48	85	43	50.6
7 Զանգված 49	92	51	55.4
7 Զանգված 50	94	61	64.9
7 Զանգված 51	97	61	62.9
7 Զանգված 52	72	29	40.3
7 Զանգված 53	95	59	62.1
7 Զանգված 58	97	56	57.7
7 Զանգված 59	106	50	47.2

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Կարախանյան 33	84	47	56.0
Ջրվեժ Մայակ թաղ. 1	90	67	74.4
Ջրվեժ Մայակ թաղ. 2	97	46	47.4
Ջրվեժ Մայակ թաղ. 2/1	43	21	48.8
Ջրվեժ Մայակ թաղ. 3	70	48	68.6
Ջրվեժ Մայակ թաղ. 4	70	50	71.4
Ջրվեժ Մայակ թաղ. 5	68	49	72.1
Ջրվեժ Մայակ թաղ. 6	72	57	79.2
Ջրվեժ Մայակ թաղ. 7	69	36	52.2
Ջրվեժ Մայակ թաղ. 8	82	60	73.2
Ջրվեժ Մայակ թաղ. 9	92	54	58.7
Ջրվեժ Մայակ թաղ. 26	31	31	100.0
Ջրվեժ Մայակ թաղ. 26/1	1	1	100.0
Ջրվեժ Մայակ թաղ. 27	105	80	76.2
Ջրվեժ Մայակ թաղ. 30	72	66	91.7
Ջրվեժ Մայակ թաղ. 31	110	100	90.9
Ջրվեժ Մայակ թաղ. 32	67	59	88.1
Ջրվեժ Մայակ թաղ. 33	65	55	84.6
Ջրվեժ Մայակ թաղ. 34	65	53	81.5
Ջրվեժ Մայակ թաղ. 35	74	55	74.3
Ջրվեժ Մայակ թաղ. 36	66	53	80.3
Ջրվեժ Մայակ թաղ. 37	67	60	89.6
Ջրվեժ Մայակ թաղ. 38	67	57	85.1
Ջրվեժ Մայակ թաղ. 39	66	62	93.9
Ջրվեժ Մայակ թաղ. 40	67	45	67.2
Ջրվեժ Մայակ թաղ. 41	69	61	88.4
Ջրվեժ Մայակ թաղ. 42	68	47	69.1
Ջրվեժ Բանավան 1	82	24	29.3
Ջրվեժ Բանավան 1/1	71	52	73.2
Ջրվեժ Բանավան 2	40	18	45.0
Ջրվեժ Բանավան 3	24	19	79.2
Ջրվեժ Բանավան 4	27	26	96.3
Ջրվեժ Բանավան 5	114	84	73.7
Ջրվեժ Բանավան 6	112	100	89.3
Ջրվեժ Բանավան 7	93	76	81.7
Ջրվեժ Բանավան 8	71	65	91.5
Ջրվեժ Բանավան 9	66	62	93.9
Ջրվեժ Բանավան 10	74	64	86.5
Ջրվեժ Բանավան 11	72	49	68.1
Ջրվեժ Բանավան 12	65	56	86.2
Ջրվեժ Բանավան 13	69	61	88.4
Ջրվեժ Բանավան 14	66	51	77.3
Ջրվեժ Բանավան 15	73	63	86.3
Ջրվեժ Բանավան 16	71	58	81.7
Ջրվեժ Բանավան 17	71	61	85.9
Ջրվեժ Բանավան 18	31	22	71.0
Ջրվեժ Բանավան 42	68	49	72.1
Ընդամենը	7012	4790	68.3

## 2.6 Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում

«Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունը ջրի կորուստների նվազեցման իր հիմնական գործառնությունների կարևորագույն բաղադրիչներից է համարում ակտիվ պայքարը խմելու ջրի ապօրինի օգտագործման դեմ: Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրությունները ինտերակտիվ համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն հայտնաբերված հասցեները փոխանցվում են ՏՏ տնօրինությանը՝ ապօրինի միացումները ապամոնտաժելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա կատարված վերահաշվարկների վերաբերյալ տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:



Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	105	49.292	8.890.413
Մարզեր	303	119.703	20.418.630
Ընդամենը	408	168.995	29.309.043

Արձանագրությունների հիման վրա հաշվարկված գումարները, ապօրինություն իրականացրած անձանց կողմից չվճարելու դեպքում, փոխանցվում են Իրավաբանական վարչություն՝ սահմանված կարգով բռնագանձում իրականացնելու նպատակով:





**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ**









### 3.1. Ջրամատակարարման շարունակականություն







Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի փետրվար ամսվա շարունակականության տվյալները՝ 98.5%, որոնք նույնն են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ: Մյուս բոլոր քաղաքների և գյուղական համայնքների համար ջրանջատման փաստացի տևողությունն ու հայտարարված գրաֆիկների միջև դեռ առկա է զգալի տարբերություն:

Ջրամատակարարման շարունակականություն (Երևան)



Հաշվետու ամսվա ընթացքում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինություններում թվով 76 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 12-ը անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից: Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները.






Շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից խողովակաշարի ներքին ուսումնասիրման տեսախցիկով հետազոտվել է Սարի-Թաղ թաղամասում գտնվող D=400մմ ջրագիծը, ինչի արդյունքում պարզվել է, որ ուսումնասիրման կետից 11մ հեռավորության վրա առկա է ջրագծի վթար Q=4լ/վ ջրաքանակով: Հայտնաբերված վթարը վերացվել է «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից:





### 3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում



Հաշվետու ամսվա ընթացքում Էներգովերահսկողության խմբի աշխատանքների, վերահսկողության, հաշվառման բարելավման և պոմպերի աշխատանքի դադարեցման արդյունքում էլ.էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 46.207Կվտ/ժ. (8.96 %) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

● Եղվարդում գտնվող պոմպակայանի էլ.էներգիայի ծախսի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ պոմպակայանում գոյություն ունի լարանցում, որն էլ ապամոնտաժվել է: Լարանցման վերաբերյալ կազմվել է արձանագրություն (1200կՎտ – 49.976 դրամ):

● Բագրատունյաց 17 հասցեում գտնվող պոմպակայանի էլ.էներգիայի ծախսի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ պոմպակայանում գոյություն ունի լարանցում, որն էլ ապամոնտաժվել է:




● «Արգել» պոմպակայանի էլ.էներգիայի ծախսի ուսումնասիրման աշխատանքների արդյունքում պարզվել է, որ առկա է 10.330կՎտ հավելագրում: Այդ մասին տեղեկացվել է «ՀԷՑ» ՓԲԸ համապատասխան պատասխանատուներին՝ համապատասխան գործողություններ իրականացնելու նպատակով:

● Երևանյան խճուղու 16, 24, 25, 26 հասցեներում գտնվող պոմպակայանի էլ.էներգիայի ծախսի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերոնշյալ պոմպակայանը չի աշխատում, և առկա է 3.950կՎտ ծախս: Այդ մասին տեղեկացվել է «ՀԷՑ» ՓԲԸ-ի համապատասխան պատասխանատուներին:


Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 221 հասցե: Թվով 4 պոմպակայանում հայտնաբերվել են վերացվել են թերություններ:

Հասցե	Կատարված աշխատանք	Ամսկան / Կվտ/ժ
Ք.Երևան, Եղվարդ պ/կ	Արձանագրություն	1200
Ք.Երևան, Արգել պ/կ	Հավելագրում	10330
Ք.Երևան, Բագրատունյաց 17	Լարանցում	144
Ք.Գյումրի Եր. Խճ. 16,24,25,26	Ավել ծախս	3950
Ընդամենը		15624

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ.էներգիայի ծախսը նվազել է 10.539 ԿՎտ/ժ կամ 32% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ.էներգիայի ծախսը նվազել է 19.739ԿՎտ/ժ կամ 35% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




Փետրվար ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 421.078կՎտ/ժամ (44.69%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ.էներգիան*



Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 1.208.560կՎտ/ժամ կամ (25.80%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*«Վեոյիա Զուր» ՓԲԸ կողմից սպառած էլ.էներգիան*






### 3.3. ԱՏՀ խմբի կատարած աշխատանքներ

- Երևան քաղաքի ջրահեռացման ցանցի տվյալների ճշգրտման աշխատանքների համար կոյուղագծի ցանցի թարմացում ԱՏ համակարգում, թվայնացում և տվյալների համալրում ըստ տեղամասերում կատարված ճշտումների, մասնավորապես թարմացումների կատարում Աջափնյակ վարչական շրջանի որոշ մասում:
- Համայնքների մասով տարածական ինֆորմացիայի հաշվառման աշխատանքներ:
- Համայնքների լոգեր զոնաների թվով 287 քարտեզների պատրաստման աշխատանքներ:
- «Կենտրոն», «Շենգավիթ», «Էրեբունի» և «Հարավ» տեղամասերի սպասարկման տարածքում Երևան քաղաքի ջրահեռացման ցանցի ճշգրտման աշխատանքներ:
- Կոյուղագծերի աշխատանքային քարտեզների կազմում և տպագրում «Արևելք» և «Արևմուտք» Տարածաշրջանների տնօրինությունների համար՝ ճշգրտման աշխատանքների կատարման, հետագա թվայնացման և տվյալների բազայի համալրման նպատակով:
- Ջրատարադրության օբյեկտների թվայնացում՝ ըստ կոորդինատների և համապատասխան բազաների ստեղծում:
- Համայնքների կոյուղագծերի երկարությունների հաշվարկում:
- «Արևելք» և «Արևմուտք» ՏՏ-ների սպասարկման տարածքների կոյուղագծերի և դիտահորերի քարտեզների կազմում ըստ գոտիների:
- Երևան քաղաքի բաժանորդների ֆիզիկական և իրավաբանական կոդերի առանձնացում՝ ըստ ջրամատակարարման գոտիների:
- Թվով 10 հատակագծերի կազմում՝ ըստ մարզերի, որոնց մեջ ներառված են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքները:
- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքների բազայում առկա կոյուղագծերի, փականների, դիտահորերի, ՕԿՉ-ների «Autocad» ծրագրից տեխափոխում «ArcGis» ծրագիր:
- «Բազմադրյուր-Ղազարավան» և «Նոյեմբեյան» ջրատարների տվյալների բազայի ստեղծում և քարտեզագրում ԱՏ համակարգում:
- «Բազմադրյուր-Ղազարավան» և «Նոյեմբեյան» ջրատարների, ինչպես նաև Արթիկ, Բերդ, Ապարան, Դիլիջան քաղաքների ներքին ցանցի քարտեզների պատրաստում տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:
- «Auto Cad» ծրագրի օգտագործման դասընթացի անցկացում Ջրատար համակարգի կարգավորման խմբի աշխատակիցների հետ:
- «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում՝ տեղամասերի մասնագետ-տեսուչների հետ միասին: Հավաքագրված տեղեկատվության ներմուծում ԱՏ համակարգ և փոխանցում Առևտրային տնօրինությանը՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով:
- Լոռու մարզի Վանաձոր քաղաքի բաժանորդային կետերի տեղադիրքի ճշտում՝ մշակում և վերլուծություն՝ «Ինտերակտիվ» համակարգի համալրման նպատակով:
- «Google Earth» ծրագրի օգնությամբ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպասարկվող համայնքներում տեղադրված լոգերների տեղադիրքերի կոորդինատացում և բարձրությունների որոշում:
- «Bentley sustaining infrastructure»-ի կողմից առաջարկվող փաթեթների ուսումնասիրություն՝ ենթակառուցվածքների հիդրավլիկ մոդելավորման նպատակով:


### 3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ




● Ռաֆֆու փողոցում տեղադրված ծախսաչափից ստացված տվյալներից պարզվել է, որ տվյալ տարածքում ջրաքանակն ավելացել է 15լ/վ-ով: Այդ մասին տեղեկացվել է «Շահումյան» տեղամասը, որի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է վթարի վայրը: Ռաֆֆու փողոցի 91 և 93 շենքերի հարակից տարածք: Վթարավերականգնողական աշխատանքներից հետո D=250մմ ջրագծի վրա առկա անցքը փակվել է զոդման միջոցով:




● «Էրեբունի» տեղամասի սպասարկման տարածքում 13.02.2018թ-ին հայտարարված պլանային ջրանջատման ժամանակ փակվել էր «Արին-Բերդ» ՕԿՁ-ի ելքը, քանի որ տվյալ տարածքների ջրամատակարարումն իրականացվում էր նշյալ ՕԿՁ-ից: Ամբարի գերլցումից խուսափելու համար այն սնուցող ջրագծի փականը փակվել էր «SCADA» հեռակառավարման ծրագրի միջոցով: Սակայն ջրանջատման աշխատանքներն ավարտելուց հետո «SCADA» ծրագրով մուտքի փականի բացման հրահանգը չէր կատարվել: Այդ մասին տեղեկացվել էին «Էրեբունի» տեղամասի աշխատակիցները, որոնք զստացված փականը վերանորոգել էին հայտարարված վթարային ջրանջատման ժամանակ: Իրականացված աշխատանքների արդյունքում ջրամատակարարումը վերականգնվել էր:



● Լենինգրադյան փողոցում տեղադրված ջրաչափից ստացված տվյալներից պարզվել էր, որ տվյալ ջրագծով հոսող ջրաքանակը նվազել էր 40լ/վ-ով, ինչի մասին տեղեկացվել է «Մաշտոց» տեղամասը: Վերջինիս աշխատակիցների կողմից հայտնաբերվել է վթարի վայրը, որը գտնվում էր Հալաբյան 22 շենքին հարակից տարածքում: Վթարավերականգնողական աշխատանքները իրականացնելու նպատակով հայտարարվել էր վթարային ջրանջատում, որի ժամանակ երեք հատվածներում իրականացվել էին D=700մմ ջրագծի զողման աշխատանքներ, որոնց ավարտից հետո ջրամատակարարումը վերականգնվել էր:




● «Գառնի» պոմպակայանից դեպի «Խարբերդ» ՕԿՁ ջրատարի վրա հայտնաբերվել էր վթար: «Արին Բերդ» ՕԿՁ-ի հարակից տարածքում, որտեղ անցնում է «Գառնի» ջրատարը, տեղադրված է հեռակառավարվող փական և ջրաչափ, որոնց միջոցով կառավարվում է դեպի «Խարբերդ» ՕԿՁ հոսող ջրաքանակը, իսկ «Խարբերդ» ՕԿՁ-ի տարածքում տեղադրված է ճնշման տվիչ, փական և ջրաչափ: Վերջինս ֆիքսում է տվյալ ՕԿՁ մուտք գործող ջրաքանակը: Սովորաբար ճնշումը ջրագծում 90մ-ից ցածր չպետք է լինի: Այն ապահովելու համար «Խարբերդ» ՕԿՁ-ի մուտքի փականը սեղմվում է այնքան, որ «Արին Բերդ» ՕԿՁ-ի տարածքում տեղակայված ջրաչափի և «Խարբերդ» ՕԿՁ-ի տարածքում տեղակայված ջրաչափերի ջրաքանակների տարբերությունը կազմի 15-20լ/վ: Մինչդեռ վթարի հայտնաբերման ժամանակ այդ տարբերությունը հասել էր 35լ/վ-ի, ինչի մասին հաղորդվել էր ջրատար համակարգերը կարգավորող խմբին, որոնց կողմից պարզվել էր վթարի ստույգ հատվածը: Վթարը վերացնելու համար անհրաժեշտություն էր առաջացել ջրագրկելու այդ ջրագիծը, որպեսզի իրականացվեն զողման աշխատանքները:





ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ  
ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ  
ՀԱՄԱԿԱՐԳ





### 4.1. Համակարգչային ցանց

Փետրվար ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ համակարգչային և ցանցային աշխատանքները.

- Ներդրվել է նոր «Qualis» ծառայությունը՝ Ընկերության բոլոր «Public IP» հասցեների սկանավորման և հնարավոր վտանգների բացահայտման նպատակով: Ծառայությունը ներդրվել է «Veolia Group IT» անվտանգության մասնագետների հետ համագործակցության արդյունքում:
- Հին HP սերվերներից տեղափոխվել են Mobitoweb, Mdaemon, AW-SCVMM01, VJ-APP01 վիրտուալ սերվերները:
- Հին «Dell PowerEdge T610» նոր «HP» սերվերների մեջ տեղափոխվել են «Debian-DHCP», «Cacti-Deb» վիրտուալ սերվերները:
- Ներդրվել է «Spiceworks Inventory» ծրագրային լուծում՝ նախնական թեստավորման համար: Այն թույլ է տալիս հավաքագրել ցանցում առկա համակարգիչների մասին տեղեկատվությունն ու ստեղծել տարատեսակ հաշվետվություններ ծրագրային ապահովման և համակարգիչների համալրվածության մասին:
- Նոր HP սերվերների մեջ տեղափոխվել է Փասթաթղթաշրջանառության սերվերը:
- Թարմացվել են բոլոր «Linux» օպերացիոն համակարգով աշխատող սերվերները:
- ՄՏ Առևտրային Տնօրինության «Արմավիր» տեղամասի՝ ք.Արմավիր, Հանրապետության 28 և «Արևելք» ՏՏ «Գորիս» տեղամասի՝ ք.Գորիս, Մյունիքի 197 հասցեներում կատարվել են համակարգչային և հեռախոսային ցանցի մոնտաժման աշխատանքներ, համակարգչային տեխնիկայի տեղափոխություն, տեղադրում, կարգաբերում, միացում Ընկերության միասնական օպտիկամանրաթելային ցանցին:
- Շիրակի 94 հասցեում ռեգերվային սերվերային սենյակի նորոգման նպատակով կատարվել են սերվերային պահարանների և համակարգչային ցանցերի ապամոնտաժման և նորոգման ավարտից հետո մոնտաժման աշխատանքներ:
- Հիմնանորոգվել են թվով 5 համակարգիչներ և տրամադրվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ աշխատակիցներին:

### 4.2 Ինտերակտիվ համակարգ

Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից մշակվել և իրականացվել են մի շարք փոփոխություններ «Ինտերակտիվ» համակարգում՝ կապված Տարածաշրջանների Առևտրային տնօրինությունների ստորաբաժանուժների փոփոխությունների հետ:

Քանի որ Ընկերության Առևտրային տնօրինություններում աշխատակիցների ընդունման և ազատման շարժը բավականին շատ է, նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից ստեղծվել է նոր հնարավորություն, որի օգնությամբ ադմինիստրատորի կողմից նոր աշխատակցի համար նոր օգտանուն բացել և համապատասխան արտոնություններ տրամադրելը դարձել է առավել վերահսկելի:

«Ինտերակտիվ» համակարգում ավելացվել է ևս մեկ հնարավորություն, որի միջոցով Տեխնիկական կամ Առևտրային տնօրինությունները ծրագրում համապատասխան գործողություններ իրականացնելով՝ ապահովում են ապահավաքակցված ջրաչափի բաժանորդին վերադարձնելու գործընթացը: Այսպիսով հնարավոր է դառնում ֆիքսել և վերահսկել ջրաչափերի շարժը:

«Ինտերակտիվ» համակարգի պարտքացուցակների և ցուցմունքների ֆիքսման բլանկներում կատարվել են փոփոխություններ և ավելացումներ:

Որոշակի ծրագրային թարմացումներ են իրականացվել փաստաթղթաշրջանառության ծրագրում:


### 4.3 Բջջային օպերատորներ և ինտերնետ

Հաշվետու ամսվա ընթացքում ԵՏ Առևտրային Տնօրինության նոր Նուբարաշեն, Զնքուշի 4/3 հասցեում կատարվել են տվյալների հաղորդման օպտիկամանրաթելային մալուխի մոնտաժման աշխատանքներ (օպերատոր «Ռոստելեկոմ»):


### 4.4. Նոր սարքավորումներ և ծրագրեր

Փետրվար ամսին Ներդրման Տնօրինության համար ձեռք են բերվել թվով 3 գերիզոր համակարգիչներ և գունավոր բազմաֆունկցիոնալ սարք:

# ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ







Ընկերության Ֆեյսբուքյան պաշտոնական էջի ակտիվությունը պայմանավորված է նույն էջի բաժանորդների և ընդհանրապես այն սպառողների ակտիվությամբ, որոնց համար էլեկտրոնային լրատվամիջոցներն ու սոցիալական ցանցերը հաղորդակցության առավել նախընտրելի միջոց են հանդիսանում:

Մասնավորապես մեծ արձագանք ստացան օգտատերերի հրապարակումները՝ կապված Դիլիջանում մատակարարվող ջրի մի կարճ ժամանակով պղտորվելու փաստի հետ, և երկրորդը Երևանի Էրեբունի վարչական շրջանի բնակարաններից մեկի ծորակից հոսած լվացքաջրի կապակցությամբ: Դրանցով պայմանավորված, ՋԼՄ-ների բուռն արձագանքը հնարավոր եղավ կասեցնել Ծառայության օպերատիվ միջամտության արդյունքում: Անմիջապես պարզվել են դրանց պատճառները և տրվել պարզաբանումներ: Մասնավորապես «Հանրային» ու «Ավրորա» ռադիոկայաններին, tert.am, shamshyan.com, slaq.am, armlur.am, news.am լրատվական կայքերին:



Սակայն ամսվա «մեխն» այս առումով անշուշտ Նուբարաշենի քրեակատար-րողական հիմնարկի կոյուղաջրերի արտահոսքի հետ կապված իրադարձությունն էր: Այստեղ Ծառայությունը նույնպես աշխատել է հնարավոր քննադատության դեմ առնելու սկզբունքով: Երևանի քաղաքապետարանի Ավագանու նիստին տեղի ունեցած արտակարգ դեպքից արդեն ժամեր անց, ՋԼՄ-ները ստացել են հստակ պարզաբանում ու հավաստիացում, որ «Վեոլիա Ջուր»-ը դրա հետ որևէ առնչություն չունի, ու որ Օպերատորը նույնիսկ ժամանակին խնդրի լուծմանն ուղղված նախաձեռնությամբ է հանդես եկել: Այնուհետև «Հանրային» հեռուստաալիքը պատրաստել է ռեպորտաժ՝ Նուբարաշենից ու նկարագրել «Վեոլիա Ջուր» Ընկերության դրական աշխատանքը: Համապատասխան մամուլի հաղորդագրություն է ուղարկվել ՋԼՄ-ներին՝ այդ մասին պատմող լուսանկարաշարով: Հանրությունը համոզվել է, որ Վեոլիան եկել է օգնության և անում է այն, ինչ իր խնդիրը չի հանդիսանում:



Լուրջ խնդիրների է դիմագրավել Ծառայությունը ջրաչափերի զանգվածային փոխարինմամբ պայմանավորված բնակիչների բողոքների կապակցությամբ: Հնարավոր է եղել «Արմենիա» հեռուստաալիքի «Մուր անկյուն» հաղորդաշարի հետ պայմանավորվածություն ձեռք բերել պատրաստվող հաղորդմանը տալ ինֆորմատիվ ուղղվածություն: Դրա համար կազմակերպվել է լրագրողի այց Ջրաչափերի ստուգաչափման լաբորատորիա: Իսկ նույն թեմայի քննարկումը «Հանրային ռադիոյի» «Սպառողի ժամ» հաղորդաշարով կրել է ավելի սուր բնույթ: Քննարկմանը մասնակցել է Երևանի տարածաշրջանի

առևտրային տնօրենը, ով փորձել է պարզաբանել առաջացած խնդիրների պատճառները ու խոստացել է ընդունել բնակիչներին՝ դրանց լուծման նպատակով: Ճիշտ է դժգոհությունը փսացել է, բայց Ընկերության ներկայացուցչի մասնակցությունը հաղորդմանը այնուամենայնիվ հանել է հարցի սրությունը: Փետրվարին ակտիվացել են անձրևատարների մաքրման աշխատանքները: Հաշվի առնելով դրանց հրատապությունը գարնան անձրևային սեզոնի նախօրեին, Երևանի քաղաքապետարանի «Մայրաքաղաք»

հեռուստածրագրի հետ լուսաբանվել է ընթացող աշխատանքը երկու հեռուստաալիքով: Չեն մոռացվել նաև մարզերը: Մեկական ռեպորտաժներ են կազմակերպվել Գյումրիի «Շանթ» ու Վանաձորի «Ֆորտունա» մարզային հեռուստաալիքներով: Առաջինը պարզաբանել է ջրագծերի վթարների պատճառները քաղաքում, իսկ երկրորդը ներկայացրել է, «Վեոլիա Ջուր» Ընկերության նախաձեռնությամբ, քաղաքի մի քանի փողոցներում ջրամատակարարման բարելավմանն ուղղված աշխատանքը:



Ինչ վերաբերում է համակարգի ընթացիկ աշխատանքներին կամ կատարվող իրադարձություններին, ապա դրանցից առավել կարևորների վերաբերյալ հրապարակումներ են ապահովվել ՋԼՄ-ներում, այդ թվում թվով 4 թերթերում և «Վեոլիա Ջուր» Ընկերության ֆեյսբուքյան պաշտոնական էջում: Օրինակ, կիրառանվտանգության հարցերին նվիրված «Վեոլիա Գրուպ»-ի սեմինարը: Հրապարակումներ են եղել Տեառնընդառաջին, Մայրենի լեզվի օրվան, ազգային ու միջազգային տոներին նվիրված: Ցուցադրվել են նաև վարձավճարների գանձման ու պայմանագրերի կնքման մասին տեսահոլովակներ մի քանի հեռուստաալիքներով:



Ծառայությունը գրեթե ավարտին է հասցրել 2018թ. Հաղորդակցության ծրագրի մշակումը, որը նախատեսվում է իրականացնել ապրիլ-դեկտեմբեր ամիսներին մրցույթով ընտրվող Գովազդային կազմակերպության միջոցով: Իսկ մինչ այդ շարունակվում է ՋԼՄ-ների հետ ընթացիկ աշխատանքը 2017թ. փորձի հիման վրա՝ առաջացող խնդիրների լուծման նպատակով:

**ՈՐԱԿԻ,  
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**







### 6.1 Փաստաթղթերի մշակում

● Ելնելով Ընկերության ինժեներատեխնիկական անձնակազմերի կատարողունակության և պատշաճ մասնագիտական որակավորման շարունակական բարելավման պահանջներից և ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» 201.1, 247 և 254 հոդվածների պահանջներով, մշակվել է Ընկերության քլորակայանները, ամբարձիչ սարքավորումները, կաթսայատները շահագործող անձնակազմերի, ինչպես նաև էլեկտրատեխնիկների և գազատեխնիկների մասնագիտական որակավորման դասընթացների անցկացման թվով 8 տեխնիկական առաջադրանք, որոնց հիման վրա Ընկերության Գնումների ընթացակարգի համաձայն, կազմակերպվել է ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմնի ընտրության և վերջինիս պայմանագրի շտրիման գործընթաց:

● Ելնելով Ընկերության համակարգում Անվտանգության և Առողջության ռիսկերի գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից, լրամշակվել է Ընկերության ՀՏԿ-ների և Վարչական շենքերի (աշխատատեղերի) «Ռիսկերի գնահատման թերթիկները»:




**VEOLIA** ՅՈՒՐ **<<ՎԵՈՒԽ ՋՈՒՐ>> ՓԲԸ** **GRSE** Տեղաբնակ

**ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՐԹԻԿ**  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՆՈՎՄԱՆ / **SAFETY CHECKLIST**

Սկզբնական կատարողության վրա ընթացող ստորաբաժանման օրենսկրթություն	Ապարան ջրաղբյուրը քլորակայան	Ամիս, ամսաթիվը 26.02.2018 Date inspection conducted
Սկուզայ իրականացող(ներ)ի անուն, ազգանունը Մ. Ղազարյան, Հ. Ստրեփանյան Name of Supervisor(s)		

ՍՏՈՒԳՄԱՆ ԵՆԹԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ / Parts	Անբավարար / insufficient	Բավարար / sufficient	Լավ / Good	Ծանոթություն / Comment
<b>Օդափոխություն / Ventilation</b>				
Օդափոխության համակարգերի վիճակը / Ventilation system			✓	
<b>Ինքնամբարձիչ սարքեր / Crane Track</b>				
Տեխնիկական զննության արդյունքը / Results of the technical examination		✓		
<b>Սարքեր-սարքավորումներ, ագրեգատներ / Equipments, Aggregate</b>				
Պոմպերի տեխնիկական վիճակը / Condition of pumps			✓	
Պոմպերի ղեկավարման վահանների տեխնիկական վիճակը / Condition of pumps control panel			✓	
Քլորացման սարքերի տեխնիկական վիճակը / Condition of Chlorination Equipment			✓	
Նյութակազարների վրա տեղադրված մանոմետրների վիճակ / Մագիստրալ փականների վիճակ / Condition of Manometer, valves		✓		Ենթակա են ստուգաչ արժան
<b>Ղուների փականներ / Door locks</b>				
Պոմպակայանի դռների փականների վիճակը / Condition of Locks of			✓	



● Միաժամանակ, հիմք ընդունելով ՎԵՈՒԽ ԳԲՈՒՊԻ Ահազանգման Ընթացակարգի «SUR PRO AL-01» պահանջները, և կարևորելով Ընկերության ստորաբաժանումների Արտակարգ և (կամ) կրիտիկական իրավիճակներում գործողությունների համակարգման անհրաժեշտությունը, մշակվել և տեղայնացվել է Ընկերության Ահազանգման ընթացակարգը, և Ընկերության ղեկավար կազմի կողմից նշանակվել են Ընկերության Ահազանգման պատասխանատուներ:

● «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի միջև նախատեսվող համագործակցության շրջանակներում ՈԱԱ Ծառայության կողմից հունվար ամսին մշակված բանվորների (փականագործների, խողովակաշարողների) և մասնագետ-տեսուչների մասնագիտական որակավորման դասընթացի տեխնիկական առաջադրանքը ներկայացվեց ղեկավար կազմի քննարկմանը, որի արդյունքում տեխնիկական առաջադրանքը լրամշակվեց, փաստաթղթում կատարվեցին համապատասխան փոփոխություններ:



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐՄԱԸ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐՄԱԸ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ  
ԴԱՍՇՆԹՅՈՒՆ



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐՄԱԸ

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ  
(ՓԱԿԱՆԱԳՈՐԾՆԵՐԻ,  
ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐՈՂՆԵՐԻ)  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ  
ԴԱՍՇՆԹՅՈՒՆ

## 6.2 Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում

● Ելնելով Ընկերության համակարգում Անվտանգության և Առողջության ռիսկերի գնահատման, կանխարգելիչ միջոցառումների կիրառման և աշխատակիցների անվտանգության մասով հրահանգավորման գնահատման անհրաժեշտությունից իրականացվել են պլանավորված և չպլանավորված Անվտանգության ստուգայցներ թվով 12 քլորակայանում, պոմպակայանում և սանգոտիներում:

● Ուսումնասիրվել է Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 20 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման՝ մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:





### 6.3 Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ

ՀՀ վարչապետի 2017թ. հոկտեմբերի 27-ի թիվ 1225-Ա որոշման համաձայն՝ ՀՀ ԱԻ նախարարի հրամանի հիման վրա, սույն թվականի փետրվարի 12-16-ը ընկած ժամանակահատվածում ՈԱԱ Վարչությունը մասնակցել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունում ՔՊ և ԱԻ վիճակի համալիր գնահատման նպատակով հրավիրված եռօրյա աշխատանքային հանդիպմանը:

Միաժամանակ ԱԻ նախարարության հանձնաժողովի և ՈԱԱ վարչության աշխատակիցների հետ Հնկերության Հանդիպումների սրահում կայացել է աշխատանքային խորհրդակցություն, որի շրջանակներում ուսուցասիրվել է Հնկերության ՔՊ պլանը, ՔՊ կազմավորումների/խմբերի փաստաթղթային պլանավորումը, անձնակազմի ՔՊ և ԱԻ ուսուցման 2018 թվականի պլանը:



*ԱԻ և ՔՊ միջոցառումների մասով խորհրդակցություն ՀՀ ԷԵԲՊՆ-ում*



*ԱԻ և ՔՊ մասով պատրաստվածության վերաբերյալ զեկուցում ՈԱԱ Ծառայության պետի կողմից*

Հանձնաժողովն այցելեց Հնկերության խմբու ջրի որակի կենտրոնական լաբորատորիա և ծանոթացավ արտադրական և լաբորատոր հսկողության կազմակերպման աշխատանքներին:

Այս շրջանակներում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ՔՊ ղեկավար կազմի, տարահանման հանձնաժողովի և ՔՊ կազմավորումների հրամանատարական կազմի իրավիճակի բարդ պայմաններում գործելու ունակությունները գնահատելու նպատակով անցկացվեց շտաբային վարժանք: Վարժանքի մտահղացմամբ նախատեսված միջոցառումներն իրականացվեցին ողջ ծավալով:

Իրականացված միջոցառման ընթացքում Հնկերությանը հնարավորություն ընձեռվեց շտկելու առկա խնդիրները և կատարելագործելու գործնական հմտությունները:



*ԱԻՆ գնահատող հանձնաժողովի այցելությունը Խմբու ջրի որակի հսկողության կենտրոնական լաբորատորիա*





«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: [info@vjur.am](mailto:info@vjur.am)

